Փոփոխություններ բժշկական արտադրատեսակների ներմուծման կարգում

Հարգելի գործընկերներ,

«**ՀՀ տարածք բժշկական արտադրատեսակների ներմուծման կարգը և բժշկական արտադրատեսակների ներմուծման նպատակով իրականացվող փորձաքննության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու մասին»** ՀՀ կառավարության 2023 թվականի թիվ 429-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ ՀՀ Կառավարության 2026 թվականի հոկտեմբերի 29-ի 1557-Ն որոշմամբ կատարվել են լրացումներ, մասնավորապես՝ լրամշակվել է Որոշմամբ ամրագրված ԱՏԳ ԱԱ ծածկագրերի ցանկը։ Արդյունքում, Որոշման շրջանակներում սույն թվականի նոյեմբերի 28-ից հավաստագրման ենթակա կլինեն նաև՝

3004-ից	Բժշկական արտադրատեսակ հանդիսացող արտադրանքը
3304-ից	3304990000 (միայն ներարկումների համար նախատեսված միջոցներ)
3824-ից	3824996400 (դեղագործության կամ վիրաբուժության մեջ կիրառվող ապրանքներ և բաղադրություններ, այլ՝ նախատեսված միայն ներարկումների համար)

Հարգանքով՝

«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ